ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. 060650035
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am
N_____
------- ----------2024թ.

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԿ-Ի
«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ԳՐԻՇԱ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ
(Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanyan@hetq.am)

Հարգելի՛ պարոն Բալասանյան

Ի պատասխան Ձեր 2024 թվականի հունվարի 29-ի էլեկտրոնային հարցման՝ տեղեկացնում եմ, որ 2021-2024 թվականների ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը (հարցմանը պատասխանելու օրվա դրությամբ) պետական բյուջեի միջոցներից, դատարանների վճիռների հիման վրա աշխատանքից ազատվելու հետևանքով հարկադիր պարապուրդի գումար չի վճարել և հարցմանը պատասխանելու օրվա դրությամբ, աշխատանքից ազատվելու հետևանքով հարկադիր պարապուրդի գումար բռնագանձելու պահանջով, ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առկա են թվով 4 (չորս) վարչական գործեր, որոնք պայմանավորված են ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 251-Ն , ՀՀ վարչապետի 2021 թվականի փետրվարի 26-ի N 172-Լ որոշումների ընդունմամբ և «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-97-Ն ՀՀ օրենքի (այսուհետ՝Օրենք, խմբագրված 03.02.2021թ. ՀՕ-70-Ն օրենքով) 8-րդ հոդվածի 3-րդ մասով:

Մասնավորապես ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 251-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ 2021 թվականի ապրիլի 1-ին դադարեցվել են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումներ՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների գործունեությունը:

ՀՀ վարչապետի 2021 թվականի փետրվարի 26-ի N 172-Լ որոշման համաձայն՝ 2021 թվականի ապրիլի 1-ից դադարեցվել են նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Բժշկասոցիալական փորձաքննության և Զբաղվածության պետական գրասենյակների գործունեությունը, իսկ «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-97-Ն ՀՀ օրենքի (այսուհետ՝Օրենք, խմբագրված 03.02.2021թ. ՀՕ-70-Ն օրենքով) 8-րդ հոդվածի 3-րդ մասով կարգավորվել է, առ այն, որ օրենքի ընդունումից հետո Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան գործառույթները և Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների համապատասխան գործառույթները Միասնական սոցիալական ծառայությանը վերապահելու դեպքում այդ գործառույթներն իրականացնող քաղաքացիական ծառայողները շարունակում են պաշտոնավարել մինչև Միասնական սոցիալական ծառայության անվանացանկի և քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի հաստատումը:

Վերը նշված օրենսդրական փոփոխությունների արդյունքում աշխատանքից ազատված թվով 4 (չորս) անձինք դիմել են ՀՀ վարչական դատարան աշխատանքից ազատման հրամանները անվավեր ճանաչելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը վճարելուն պարտավորեցնելու, Միասնական սոցիալական ծառայությունում կամ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում իրենց վերջին պաշտոնին հավասարազոր կամ ցածր քաղաքացիական պաշտոնի նշանակելուն պարտավորեցնելու, դրա անհնարինության դեպքում՝ միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով հատուցում վճարելուն պարտավորեցնելու պահանջով:

05.02.2024

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հարգանքներով՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Իրավաբանական բաժին
Կատարող՝ Բ. Հովհաննիսյան
Հեռ՝ 060650615